# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

### 1. Անհրաժեշտությունը

Սույն օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող ապրանքների (թանկարժեք մետաղների) արտաքին առևտուրը կանոնակարգելու անհրաժեշտությամբ:

### 2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Նախագծի նպատակն է՝ կանոնակարգել Հայաստանի համար ռազմավարական նշանակություն ունեցող ապրանքների (ոսկու, պլատինի և պալադիումի ձուլակտորների) արտաքին առևտուրը, ստեղծել առավել երկար արտադրական շղթաներ, խթանել թանկարժեք մետաղների վերամշակման խորացումը տեղում՝ բարենպաստ պայմաններ ստեղծել արտերկրից ներմուծումը կրճատելու և առավել բարձր ավելացված արժեքով տեղական ապրանքներ արտադրելու և արտահանելու համար:

Նպատակ ունենալով խթանելու (հումքի փոխարեն) առավել բարձր ավելացված արժեք ունեցող ապրանքների արտադրությունն ու արտահանումը՝ ՀՀ կառավարության մի շարք որոշումներով արդեն իսկ արգելվել է սև և գունավոր մետաղների ջարդոնի ու թափոնի արտահանումը, ինչպես նաև լիցենզավորվող գործունեություն է սահմանվել մի շարք սև և գունավոր մետաղների արտահանումը՝ սահմանելով պետական տուրք: Նշված կարգավորումները խթան են հանդիսացել տեղում սև և գունավոր մետաղների ջարդոնը վերամշակելու և առավել բարձր ավելացված արժեքով արտադրանք արտահանելու համար:

Սույն նախագծով առաջարկվում է նաև ներկայացված ապրանքների արտահանման գործընթացը իրականացնել լիցենզիաների տրամադրման միջոցով և սահմանել պետական տուրք ոսկու և պլատինի ձուլակտորների, ինչպես նաև պալադիումի արտահանման լիցենզիաների տրամադրման համար: Առաջարկվող

կարգավորումները առավել արդյունավետ կդարձնեն թանկարժեք մետաղների վերամշակման գործընթացը՝ խորացնելով այն պարզ ձուլակտորներից դեպի առավել բարձ ավելացված արժեք ունեցող արտադրատեսակների արտադրությունը և արտահանումը:

Աղյուսակ 1

**Տեղեկանք**

**2022թ. Հայաստանից արտահանված Նախագծում ներառված թանկարժեք մետաղների մասին**

| Ապրանքի անվանումը | Արտահանում | | | Ներմուծում | |
|---|---|---|---|---|---|
| | ԱՏԳ ԱԱ | Քաշը /կգ/ | Գումար /հազ.ԱՄՆ $/ | Քաշը /կգ/ | Գումար /հազ.ԱՄՆ $/ |
| Ոսկու ձուլակտոր | 7108120001 | 4571.4 | 265029.5 | 4767.9 | 228834.7 |
| Պլատինի ձուլակտոր | 7110110009 | 141.1 | 112.2 | 4.5 | 127.8 |
| Պալադիումի ձուլակտոր | 7110290000 | - | - | - | - |

Նախագծով առաջարկվող ապրանքների յուրաքանչյուր մեկ կիլոգրամի դեպի երրորդ երկրներ արտահանելու լիցենզիաներ տրամադրելու համար պետական տուրքը հաշվարկվել է այն տրամաբանությամբ (միջինը՝ միջազգային բորսայական գնի 0.75-0.8%-ի չափով), որպեսզի ապահովվի մրցակցային գներ արտահանման և տեղում վերամշակման համար:

Արտահանման վերը նշված ծավալների պահպանման դեպքում պետբյուջեի կանխատեսվող մուտքերը (պետական տուրքի տեսքով) կարող են ավելանալ շուրջ՝ 1 մլրդ դրամով:

Ներկայումս թանկարժեք մետաղների բորսայական գները պահպանվում են համեմատաբար բարձր մակարդակի վրա (Աղյուսակ 2), ուստի՝ բիզնեսի համար նպատակահարմար է արտահանել այդ ապրանքներն արտաքին շուկա, քան մշակել տեղում:

Աղյուսակ 2

## Թանկարժեք մետաղի գինը COMEX բորսայում 18.12.2023թ.

| ԱՏԳ ԱԱ ծածկագիր | Թանկարժեք մետաղ | $ - 1 տր. ունց | $ - 1կգ | մլն. դրամ - 1կգ | Առաջարկվող տուրքը | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | $ | հազ. դրամ | բազայի պատիկը |
| 7108 12 000 | Ոսկի | 2033.8 | 65386.7 | 26.2 | 642.0 | 200.0 | 200 |
| 7110 11 000 | Պլատին | 947.7 | 30468.6 | 12.2 | 296.3 | 100.0 | 100 |
| 7110 21 000 | Պալադիում | 1185.0 | 38097.8 | 15.2 | 308.6 | 115.0 | 115 |

Հաշվի առնելով, որ «Պետական տուրքի մասին» օրենքի 19.6-րդ հոդվածի 2-6-րդ մասերում ներառված ապրանքների համար նախատեսված պետական տուրքը վերադարձման ենթակա չէ՝ Նախագծով առաջարկվում է նույն պահանջը սահմանել նաև առաջարկվող (Նախագծի 1-ին հոդվածի 7-9 մասերով սահմանված) ապրանքների արտահանման համար, որի նպատակով առաջարկվում է Նախագծի 38-րդ հոդվածի վերջին պարբերությունում «2-6-րդ» թվերը փոխարինել «2-9-րդ» թվերով:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունելու կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չի առաջանում, իսկ պետական բյուջեում նախատեսվում է եկամուտների ավելացում:

Սույն նախագծի ընդունումը հնարավորություն կտա խթանել Հայաստանի համար ռազմավարական համարվող թանկարժեք մետաղների վերամշակման խորացումը՝ ինչը կնպաստի արտերկրից ներմուծման կրճատմանը, առավել բարձր ավելացված արժեքով տեղական ապրանքների արտադրության զարգացմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումից հետո անհրաժեշտություն կառաջանա մշակել և հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ (կարգ), որը կկանոնակարգի՝ ապրանքների արտահանման համար լիցենզիաների տրամադրման գործընթացը:

ՀՀ Ազգային Ժողովի կողմից սույն Նախագծի ընդունման և այն ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ կառավարության որոշման նախագիծը (կարգը), կներկայացվի ՀՀ կառավարության քննարկմանը:

3. **Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը**

Կայուն զարգացման երկարաժամկետ նպատակի խթանմանն ուղղված քաղաքականության մշակում ու իրականացում:

4. **Կարգավորման նպատակը և բնույթը**

Արտադրական շղթաների երկարացում, առավել բարդ և բարձրարժեք արտադրանքի խթանում:

**Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք**

Նախագիծը մշակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից՝ հաշվի առնելով շահագրգիռ պետական մարմինների և գործարար համայնքի ներկայացուցիչների դիրքորոշումները:

5. **Ակնկալվող արդյունքը**

Սույն նախագծի ընդունումը հնարավորություն կտա խթանել Հայաստանի համար ռազմավարական համարվող թանկարժեք մետաղների վերամշակման խորացումը՝ ինչը կնպաստի առավել բարձր ավելացված արժեքով տեղական ապրանքների արտադրության զարգացմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը:

6. **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ**

-

7. **Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)**

-